



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

2018 թվականի ներդրումային գործունեության  
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Նախաբան</b> .....	3
<b>ԲԱԺԻՆ 1.</b> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը .....	3
<b>ԲԱԺԻՆ 2.</b> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները .....	6
2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները .....	6
2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները .....	8
<b>ԲԱԺԻՆ 3.</b> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները .....	9
3.1. Գազափոխադրման համակարգ .....	9
3.1.1. Արովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ .....	9
3.1.2. Գազափոխադրման համակարգի ընդլայնում .....	9
3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ .....	10
3.2. Գազաբաշխման համակարգ .....	11
3.2.1. Նոր բաժանորդների միացում .....	11
3.2.2. Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ .....	12
<b>ԲԱԺԻՆ 4.</b> Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա .....	15
<b>ԲԱԺԻՆ 5.</b> Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը .....	16
5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը .....	16
5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը .....	17
<b>Ամփոփիչ մաս և եզրակացություններ</b> .....	19
<b>Հղումներ օգտագործված նյութերին</b> .....	20

## Նախաբան

Մույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2019 թվականի աշխատանքային ծրագրի 22-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև նաև ընկերություն) 2018 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագրի մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագիրը [Որոշումներ 2, 3] և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը [Հաշվետվություն], [Տեղեկատվություն]:

### **ԲԱԺԻՆ 1.**

#### **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել տարբեր սարքավորումների, ժամանակակից տեխնիկա տեխնոլոգիաների, մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:


Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2018 թվականի ընթացքում իրականացնել 3 614,<sup>1</sup> մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի (այսուհետ նաև ԳՍՊԿ) ընդլայնմանն ուղղված ներդրումներ՝ 430,9 մլն դրամ,
  - գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ՝ 1 157,0 մլն դրամ,
  - գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 252,5 մլն դրամ,
  - նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 564,9 մլն դրամ,
  - գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 167,9 մլն դրամ:
- այդ թվում՝ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 361,4 մլն դրամ:
- «Հրագդան-5» հիմնարկի համար ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումների 2018 թվականի կանխատեսվող ծավալը՝ 41,2 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2018 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

---

<sup>1</sup>Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառության մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գումարների:



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսվում էր ներդնել 430,9 մլն դրամ՝ 2 գազահորերի շինարարության նպատակով: 145,7 մլն դրամը, նախատեսվում էր ուղղել №23, իսկ, 285,2 մլն դրամը №4 գազահորի շինարարության աշխատանքների իրականացմանը:

Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումները՝ 1 157,0 մլն դրամը, նախատեսվում էր ուղղել վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման աշխատանքներին:

Ներդրումային ծրագրի ծավալի 252,5 մլն դրամը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով՝ այդ թվում ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների, ինչպես նաև հողատարածք ձեռք բերելու նպատակով: Նախատեսվում էր նաև հաշվառման համակարգի արդիականացման նպատակով ձեռքբերել սարքավորումներ, գործիքներ, իսկ հաշվառման ցուցանիշների

բարելավման նպատակով ներդնել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիաներ: Նշված ուղղությամբ համաձայնեցված ծավալի գերակշիռ մասը՝ 196,5 մլն դրամը, նախատեսվում էր ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման նպատակով:

564,9 մլն դրամը նախատեսված էր 11 500 նոր բաժանորդների մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման և գազաբաշխիչ ցանցի նոր գազատարերի կառուցման նպատակով:

Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումների շրջանակում նախատեսվում էր 12 250 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում:

Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով ներդրումների 565,4 մլն դրամը նախատեսված է ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել ավտոտրանսպորտային միջոցներ և մեքենա-մեխանիզմներ, համակարգչային և կազմակերպչական տեխնիկա և գրասենյակային գույք:

41,2 մլն դրամ նախատեսված էր «Հրագրան-5» հիմնարկի համար ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով:

## **ԲԱԺԻՆ 2.**

### **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները**

#### **2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները**

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2018 թվականի ընթացքում կատարել է 4 016,8 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 2 333,0 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 1 683,8 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2018 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

# Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված			Իրականացված ներդրումներ հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալների շրջանակում
					2018թ.	2018թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը	
					մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ	
1	2	3	4	5	6	7	8	9
1	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	430.9	285.2	66%	151.1	377.9	529.0	436.3
2	Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	1157.0	0.0	0%	1146.8	293.2	1440.0	1146.8
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	252.6	238.2	94%	213.3	24.8	238.2	238.2
4	Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումներ	564.9	584.4	103%	584.4	0.0	584.4	584.4
5	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	1167.9	1185.6	102%	1155.0	30.6	1185.6	1185.6
5.1	Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում	361.4	376.7	104%	376.7	0.0	376.7	376.7
6	«Հրազդան-5» հիմնարկի համար ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ	41.2	39.5	96%	39.5	0.0	39.5	39.5
<b>Ընդամենը</b>		<b>3614.4</b>	<b>2333.0</b>	<b>65%</b>	<b>3290.2</b>	<b>726.6</b>	<b>4016.8</b>	<b>3630.9</b>

Հարկ է նշել, որ ավարտված ներդրումների ծավալում Ընկերությունը ներկայացրել է Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված 125,0 մլն դրամի ներդրումներ, որոնք վերլուծության ընթացքում հաշվի չեն առնվել:

## 2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2018 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	726.6	18%	340.7	8%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	842.1	21%	44.0	1%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	1017.1	25%	1017.1	25%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ	1431.0	36%	931.2	23%
4.1	<i>աշխատանքի վճարման գծով ծախսումներ</i>	189.3		189.3	
4.2	<i>նյութական ծախսումներ</i>	796.0		319.3	
4.3	<i>տեղակայման ենթակա սարքավորումներ</i>	420.4		420.4	
4.4	<i>նախագծային աշխատանքներ</i>	24.2		1.1	
4.5	<i>այլ</i>	1.0		1.0	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>4016.8</b>		<b>2333.0</b>	



Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումներն իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով: Ինչպես և 2017 թվականին, 2018 թվականի ընթացքում սեփական ուժերով կատարվել էր ընդհանուր ներդրումների 36%-ը:

### **ԲԱԺԻՆ 3.**

#### **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները**

##### **3.1. Գազափոխադրման համակարգ**

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2018 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

##### **3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ**

2018 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 430,9 մլն դրամ՝ №4 և №23 նոր գազահորերի շինարարության նպատակով: Փաստացի իրականացվել են 529,0 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել՝ 285,2 մլն դրամը:

##### **3.1.2. Գազափոխադրման համակարգի ընդլայնում**

Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 1 157,0 մլն դրամ՝ նոր մայրուղային գազատարերի կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 440,0 մլն դրամի ներդրումներ:

«Կարմիր Կամուրջ-Ալավերդի Ըս-700 գազատարի կառուցում (տեղափոխում Վրաստանի տարածքից)» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 1 396,8 մլն դրամի աշխատանքներ:

«Ղազախ-Երևան-ԳՄՊԿ գազատարի Ըս700 լուսինգի կառուցում» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 40,4 մլն դրամի աշխատանքներ, իսկ

«Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Dպ1000 գազատարի ԿՄ0.0-:15.0 հատվածի լուսինգի կառուցում» ենթաուղղությամբ իրականացվել են 2,8 մլն դրամի աշխատանքներ:

Վերոնշյալ ներդրումները դեռևս շահագործման չեն հանձնվել:

### 3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով 2018 թվականին նախատեսվում էր 252,6 մլն դրամով ձեռք բերել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա և ավտոտրանսպորտային միջոցներ ու մեխանիզմներ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 238,2 մլն դրամի ներդրումներ:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 55,8 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Փաստացի ձեռք են բերվել 44,9 մլն դրամի հիմնական միջոցներ:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 1 ներսաչափ՝ 0,1 մլն, 2 խողովակափնտրիչ սարք՝ 4,8 մլն, 2 դաշտային գազափնտրիչ սարք՝ 7,5 մլն, 13 շարժական գազափնտրիչ սարք՝ 1,9 մլն, 101 պայթյունաանվտանգ շարժական լապտեր՝ 5,7 մլն, 85 արտահոսքի շարժական հայտնաբերիչ՝ 10,7 մլն, 3 մայրուղային հայտնաբերիչ՝ 6,4 մլն, 2 բնական և հեղուկ գազի արտահոսքի հայտնաբերիչ՝ 7,7 մլն դրամ արժեքով:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ձեռք բերել 196,5 մլն դրամ ընդհանուր արժեքով 7 տարբեր մեքենա-մեխանիզմներ: Նախատեսված քանակով մեքենա-մեխանիզմներ ձեռք են բերվել 193,0 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Էքսկավատոր-հիդրավլիկ թրթուռավոր 1,85մ3 շերտի տարողությամբ, JCBJS370LC մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 118,9 մլն դրամ՝ 1 էքսկավատորի ձեռքբերման նպատակով, որը ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 115,4 մլն դրամով:

«Ավտոամբարձիչ՝ 25տ KC-45717A-1P MA3-6312 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 49,1 մլն դրամ՝ 1 ավտոամբարձիչի

ձեռքբերման նպատակով, որը նախատեսված արժեքով փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

*«Բեռնատար-մարդատար ավտոմեքենա՝ YА3 390995 մակնիշի կամ նմանատիպ»* ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 10,9 մլն դրամ՝ 2 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

*«Բեռնամարդատար ավտոմեքենա՝ YА3 3303 մակնիշի կամ նմանատիպ»* ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 5,2 մլն դրամ՝ 1 մեքենա ձեռքբերելու նպատակով: Վերջինս փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

*«Մարդատար ավտոմեքենա՝ Շովրոլե Նիվա մակնիշի կամ նմանատիպ»* ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 12,4 մլն դրամ՝ 2 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

**«Հողատարածքների ձեռքբերում»** ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ձեռք բերել 0,3 մլն դրամ ընդհանուր արժեքով 0,03 հա հողատարածք Մարտունի քաղաքում, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

Մնացած ենթաուղղություններով 2018 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

## **3.2. Գազաբաշխման համակարգ**

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2018 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

### **3.2.1. Նոր բաժանորդների միացում**

Այս նպատակով 2018 թվականին նախատեսված էր 564,9 մլն դրամ 11 500 բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերման և տեղադրման նպատակով և 31,5 մլն դրամ գազաբաշխիչ ցանցի նոր գազատարների նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և տեղակայվել 11 984 գազահաշվիչներ՝ 555,3 մլն դրամ ընդհանուր արժեքով: Արդյունքում 2018 թվականի ընթացքում բնական գազի համակարգին միացել են 11 984 բաժանորդ և 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնական գազի մատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 702 366:

«Գազաբաշխիչ ցանցի նոր գազատարների կառուցում» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել ներդրումային ծրագրով համաձայնեցված 27,5 մլն դրամի ներդրումներ՝ Լոռու մարզի գ.Դեբեդ Հայաստանի մանուկների հիմնադրամի Սմարթ կենտրոնի գազիֆիկացման նպատակով:

«Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 4,0 մլն դրամ արժեքով ներդրումներ՝ թվով 3 գազատարերի կառուցման նպատակով:

### **3.2.2. Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ**

Այս նպատակով 2018 թվականին, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման, ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման, ավտոմեքենաների բնական գազով լիցքավորման վերասարքավորման նպատակով նախատեսվում էր իրականացնել 1 167,9 մլն դրամի ներդրումներ:

Հաշվետու տարում «**Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում**» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 565,4 մլն դրամ՝ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների և չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և շահագործման են հանձնվել 572,3 մլն դրամի ներդրումներ:

«*Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում*» ենթաուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր 361,4 մլն դրամ ներդնել 12 250 ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ տեղակայելու ուղղությամբ:

Հաշվետու տարում նշված ենթաուղղությամբ 376,7 մլն դրամ ընդհանուր արժեքով տեղակայվել են 12 793 հատ սարքեր:

«*Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում*» ենթաուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ներդնել 204,0 մլն դրամ: Հաշվետու

տարում ներդրվել է 183,2 մլն դրամ՝ հոսքափնտրիչ-գազավերլուծիչ սարքերի, ուլտրաձայնային հաստաչափերի, գրունտի տեսակարար դիմադրության, և հողանցման դիմադրության չափման սարքերի և այլ չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ներդնել 441,0 մլն դրամ 41 մեքենա-մեխանիզմների ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման են հանձնվել 455,2 մլն դրամի մեքենա-մեխանիզմներ համաձայնեցված ծավալով:

«Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 100,8 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել փոքր և միջին դասի օպերատիվ ավտոմեքենաներ:

«Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի)» ենթաուղղությամբ նախատեսվում էր 40,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռքբերել 4 մեքենաներ, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել՝ 54,1 մլն դրամով:

«Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (ցածր դասի)» ենթաուղղությամբ նախատեսվում էր 60,8 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռքբերել 10 մեքենաներ, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

«Վթարային բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 21,9 մլն դրամ՝ 5 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

«4,5 տ բեռնատարողությամբ վթարային-վերանորոգման ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի բեռնատար ավտոմեքենայի բազայի վրա» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 97,5 մլն դրամ՝ 6 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

«Մինչև 1,5 տ բեռնատարողությամբ բարձր անցողունակության վթարային ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 32,8 մլն դրամ՝ 6

մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

*«Մինչև 1,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներ»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 12,8 մլն դրամ արժեքով ձեռք բերել 2 բեռնատար, որոնք համաձայնեցված ծավալով փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

*«Մինչև 4,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներ»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 20,4 մլն դրամ արժեքով ձեռք բերել 2 ավտոմեքենա, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

*«Ավտոկռունկի ձեռքբերում ՄԱԶ տիպի»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 36,2 մլն դրամ արժեքով ձեռք բերել 1 մեքենա, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

*«Մեկ խցիկով և ամբարձիչ մանիպուլյատորով հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 42,7 մլն դրամ արժեքով ձեռք բերել 2 մեքենա, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

*«Անիվալոր ամբարձիչ-էքսկավատորի ձեռքբերում. JCB 3CX տիպի, 0,17 մ3 շերտփի տարողությամբ, հազեցած հիդրոմուրճով և խրամուղային շերտփով»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 74,9 մլն դրամ արժեքով ձեռք բերել 2 էքսկավատոր, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված ծավալով:

*«Ասֆալտ-բետոն կտրող մեքենայի (մոտորով) Q420 մակնիշի ձեռքբերում»* ենթաուղղությամբ նախատեսվում էր 1,2 մլն դրամ արժեքով ձեռք բերել 1 կտրող սարք, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 1,17 մլն դրամ արժեքով:

**«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում»** ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ներդնել 144,6 մլն դրամ՝ համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի, գրասենյակային գույքի, սերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և արտոնագրերի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 211,3 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

*«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում»* ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 67,6 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 67,5 մլն դրամի հիմնական միջոցներ:

*«Գրասենյակային գույքի ձեռքբերում»* ենթաուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ներդնել 48,7 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 46,2 մլն դրամի հիմնական միջոցներ:

*«Սերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և արտոնագրերի ձեռքբերում»* ենթաուղղությամբ 2018 թվականին նախատեսվում էր ներդնել 28,3 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 42,9 մլն դրամի հիմնական միջոցներ:

#### **ԲԱԺԻՆ 4.**

### **Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա**

Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատական վերլուծություն 2017 և 2018 թվականների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են ընդհատումների միջին տևողության (SAIDI) և ընդհատումների միջին հաճախականության (քանակի) (SAIFI) ցուցանիշները: Նշված ցուցանիշները բնութագրում են մեկ բաժանորդին բաժին ընկնող անջատումների տևողությունն ու քանակը և համաշխարհային պրակտիկայում օգտագործվում են որպես հուսալիության չափորոշիչներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են միայն այն դեպքերը, երբ ընդհատման պատճառ են հանդիսացել գազամատակարարման ցանցում առաջացած վթարները և փոխադրող ընկերությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով 2018 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը բարելավվել է միջինում 27%-ով՝ կազմելով 205,35 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականության(քանակի) ցուցանիշը միջինում բարելավվել է 30%-ով՝ կազմելով 0,25 ընդհատում/բաժանորդ: Ընդհատումների միջին տևողության ցուցանիշի մեծության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է գազամատակարարման ցանցում առաջացած վթարների նվազեցմամբ:

Մասնավորապես Տավուշի մարզում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը նվազել է 14,7 անգամ, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 11: Ընդհատումների միջին հաճախականության ցուցանիշը նվազել է համապատասխանաբար՝ 3,2 և 4,8 անգամ:

## **ԲԱԺԻՆ 5.**

### **Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**

#### **5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը**

2018 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 2 333,3 մլն դրամ ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Աշխատանքի վարձատրության գծով 189,3 մլն դրամից ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցների ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 158,5 մլն դրամի ներդրումներ: Ուստի ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 189,3 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձի ուղղությամբ իրականացված ծախսումներից ընդունվել են միայն ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցներին ուղղված 158,5 մլն դրամի աշխատավարձի ուղղությամբ ծախսումները, իսկ 30,8 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
2. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 71,4 մլն դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 100,7 մլն դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:



3. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 37,5 մլն դրամով, որը և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
4. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 9-րդ գլխի՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար դիմող անձը սահմանված կարգով վճարում է մատակարարին միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճար, որը ձևակերպվում է որպես հետագայում սպառվելիք բնական գազի դիմաց կանխավճար և մարվում է սպառած բնական գազի արժեքից այն նվազեցնելու միջոցով: Հաշվի առնելով Ընկերության ներկայացրած պարզաբանումները և 2017-2018 թթ. նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերի գազամատակարարման ցանցին միացման աշխատանքների և մարված գումարների վերաբերյալ տեղեկանքը՝ 0,35 մլն դրամը կներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում, իսկ իսկ 1,33 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

## **5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է աղյուսակ 3-ում:

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների վերաբերյալ**

մլն. դրամ

<b>1</b>	<b>Իրականացված ներդրումներ</b>	<b>4 016.8</b>
<b>2</b>	<b>Անավարտ աշխատանքներ</b>	<b>1 683.8</b>
<b>3</b>	<b>2018 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը</b>	<b>2 333.0</b>
<b>4</b>	<b>Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝</b>	<b>241.7</b>
4.1	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	30.8
4.2	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	172.0
4.3	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	37.5
4.4	Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ	1.3
<b>5</b>	<b>2018 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը</b>	<b>2 091.3</b>

## Անփոփիչ մաս և եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 65%-ով: Ներդրումները հիմնականում ուղղվել են գազաբաշխման համակարգին:
2. Գազամատակարարման ցանցին են միացել 11 984 նոր բաժանորդներ և գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 702 366: Հաշվետու տարում 12 793 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ:
3. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 2 333,3 մլն դրամի ներդրումներ, որոնցից 241,7 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 10,4%-ը, չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Հարկ է նշել նաև, որ Ընկերությունը ներկայացրել է Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված 125,0 մլն դրամի ներդրումներ, որոնք վերլուծության ընթացում հաշվի չեն առնվել:
4. 2017 թվականի համեմատ ընդհատումների միջին տևողության ցուցանիշը բարելավվել է միջինում 27%-ով՝ կազմելով 205,35 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականության(քանակը) ցուցանիշը միջինում բարելավվել է 30%-ով՝ կազմելով 0,25 ընդհատում/բաժանորդ: Ընդհատումների միջին տևողության ցուցանիշի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է գազամատակարարման ցանցում առաջացած վթարների նվազեցմամբ:

## Հղումներ օգտագործված նյութերին

- Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի №447Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
- Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018-2020 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №401Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին».
- Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի №712Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին համաձայնություն տալու մասին».
- Հաշվետվություն- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2019 թվականի մայիսի 8-ի №01-25/2154 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.
- Տեղեկատվություն - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները 2017, 2018 թվականներին  
<http://psrc.am/am/sectors/gas/service-quality-indicators>